Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է տարեկան արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրության վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքը:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոններում կատարված փոփոխություններով պայմանավորված՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղեկատվության ներկայացման կարգի հավելված հանդիսացող ձևերը նշված փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով նախատեսվում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերի լրամշակում:

Նախատեսվում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտում հրապարակված տեղեկատվության թարմացում, մասնավորապես՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի

մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների և հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները, ինչի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մատակարարների կողմից սպասարկման որակի ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

Նախատեսվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն, ամփոփում և համապատասխան ձևաչափով տեղեկանքի կազմում: Նշված գործառույթի իրականացումն ուղղված է էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման ընթացակարգի վերլուծությանը, միացման ժամկետների պահպանման վերահսկողությանն ու դրանց խախտման պատճառների որոշմանը: Գործառույթի իրականացման նպատակն էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացումն է:

Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Նախատեսվում է եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող

ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչն անհրաժեշտ է նշված համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու համար:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: